Ի թուին Հայոց ՌՁԳ (1634), և 'ի Պատրիարքութեան Ս. Աթոռոյն Երուսաղէմի Տ. Գրիգորի Արք Եպիսկոպոսի Պարոն Տէր կոչեցելոյ, պատահեցաւ դարձեալ այլայլութիւն Զատկի որ ասի ծառազատիկ, որպէս բազմիցս պատահեալ էր յառաջագոյն։ Իսկ Գրիգոր Պատրիարք նախ քան զժամանել աւուրն՝ հոգայր միշտ դարմանել զիրսն, որոյ վասն գրեալ ազգ արար յայլ և այլ կողմանս Հայոց եւ միաբանակաւոր առաջնորդացն՝ և հրաւիրեաց զնոսա գալ ժողովիլ յԵրուսաղէմ. զի գիտէր իսկ թէ առաջի կայ նմա խառնութիւն մեծ 'ի հանդիսի Լուսաւորութեան, բազմադիմի ծախք և կասկած արիւն հեղութեան, որպէս լեալ էր յառաջագոյն, և ընթերցեալ 'ի պատմութիւնս Կիրակոսի և Վարդանայ, թէ որպէս կոտորեցին այլազգիք 'ի քրիստոնէից զարս իբրեւ 11000, այլ կարմութիւն ժամանակին ոչ ներեաց հասանել ժողովրդոցն յԵրուսաղէմ եւ կամ օգնել ընչիւք։ Իսկ Յոյնք՝ ըստ ազգարարութեան Պատրիարքի նոցին, զեղան բազմութեամբ 'ի Ս. Քաղաքն յամենայն կողմանց, յորս յաւելան Ռուսք, Վիրք, Պուլղարք, Ուլահք, Սէրվիացիք, Պոսնացիք, Նաւավարք և այլ խառնիճաղանճ բազմութիւն. առին հրովարտակ յԱրքունուստ եւ ածին դռնապահապետ (Դարուճի Պաշի)։ Զգեցին 'ի կողմն իւրեանց մեծամեծ տրօք զգլխաւորս քաղաքին, և սկսան սաստիկս սպառնալ Գրիգորի Պատրիարքի, եթէ ոչ դառնաս 'ի կրօնս մեր և լինիցիս հպատակ կանոնաց և հրամանաց մերոց, ոչ միայն ճշմարտեմք զԶատիկն մեր, այլ և կորզեմք բռնութեամբ զեկեղեցիս ձեր, և բառնամք զգլուխդ յանձնէդ։ Տեսեալ Գրիգորի զանհնարին խըստութիւնս սրտից նոցա, սկսաւ աղաչել զնոսա, զի սիրով խաղաղացին, երկիցս եւ երիցս հրաւիրեաց զգլխաւորս նոցա 'ի ճաշ, և խօսեցաւ նոցա բազում բանս խաղաղականս, բայց նոքա բնաւ ոչ հաւանեցան բանից նորա։ Այլ արհամարհեալ ծիծաղէին և սուիլէին զնա եւս զի յանձն առցէ իւրովքն հանդերձ տօնել զԶատիկն 'ի միասին։ Ապա յղեցին զոմանս 'ի Կոստանդինուպոլիս, և 'ի Դամասկոս առ կուսակալն Ահմէտ Փաշայ և ամբաստան եղեն զՊատրիարքէն և զազգէն Հայոց, թէ բռնութեամբ արդելուն զմեզ յեկեղեցւոյ Ս. Յարութեան կատարել զԶատիկն ըստ սո-